



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

12 դեկտեմբերի 2018 թվականի N 196-Ա

Ա. ԲԱԼՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 9-ի N 26 արձանագրությունը (*որոշումը*), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 01/10/18357-18 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. *Մնսա Լևոնի Բայանին* 2018 թվականի դեկտեմբերի 12-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ *նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:*

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի սեպտեմբերի 11-ի «Լ. Կարապետյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին» N 151-Ա կարգադրության 2-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Չարենցավանի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2018 թվականի դեկտեմբերի 12
ք. Հրազդան



Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ